

53. Սիւն-Աստի հովիտն այսինքն թէոկրիտեայ սիկիւլացի քերթովն :
54. Ընտրելի համարի զայս ամենայն , քան 'ի խնդիր լինել խկորեայ այնուհետև :
59. Պարթևիտ լեանն յԱրկադիա , ուր օրիորդք յորսս շահատակէին :
61. Պարթև և Կիթանայի քաջազնոցն :
62. Պայտ և Պարիտ յաւերժ հարստնք անտառաց :
67. Եբրոս գետ մեծ թրակիոյ , երբեմն ոսկեբեր . որ բղխէ 'ի հոգոպեայ լեռնէ և անկանի յեգեան ծով :
68. Սիւնիա մասն թրակիոյ ցուրտ և ձիւնապատ :
69. Եթովպիա գաւառ մեծ յԱփրիկէ սահմանակից Եգիպտոսի ընդ այրեցած գոտով , յաստեղատանէն խեցգետնոյ 'ի հասարակած կոյս տարածեալ :
78. Ծանր ասէ հագներգուաց զհովանի ծառոց , մանաւանդ զգիհւոյ . այլ պարտ է իմանալ զընդերկար բազմելոյ հագներգուաց ընդ հովանեաւ . վասն որոյ ոմանք փոխանակ հագներգուաց cantantibus , ընթեռնուն յամեցողաց cunctantibus .

Գերի : (Տես երես 342)

(Հարունակուծիւն և վերջ :)

Իսանկ ընտանի խօսակցութիւնն .
րով գիշերն առաջ երթալով , արեւ ծա-
գելու մօտիկ էր . Երվա մտածեց վեր-
ջապէս իր տիկնոջը քով դառնալ : Տը-
ղան խնդրեց և հրաման առաւ իրեն
ընկերելու :

Կելլոս լեռնէն իջնելու միջոցին , ա-
զատագրի մը հետ մէկտեղ գերեաց
խումբ մը տեսան . Երվա ապշած
կանկ առաւ :

— Իսոնք Սետեւայի ծառայներն
են , ըսաւ :

Գերիներն Երվինոսի մայրը տես-
նելուն պէս , վազեցին չորս կողմն ա-
ռին :

— Իհա վերջապէս ձեռք ինկար , ը-
սաւ ազատագիրը :

— Ինչ կ'ուզես ըսել , պողաց Եր-
վա :

— Տիկնոջ քովէն չփախա՞ր մի :

— Երբէն հոն կը դառնայի :

Եզատագիրը խնտալ մըն է փրցուց :

— Իսոր փախչող գերիները երբոր
ձեռք կ'իյնան ասանկ կ'ըսեն , ըսաւ .
կապեցէք սըւոր ձեռքերը ու տարէք :

Երվա ուզեց միտքը բացատրել , բայց
հրաման եղաւ որ լուռ կենայ : Երկուսն
բանի չեկաւ Երվինոսի աղաչանքը , և
իր ձգանքը դէմ սկսան քաշելով տանիլ
իր մայրը :

— Իայց ինչ կ'ընէք , հարցուց տղան
զարհուրած :

— Զէս մի գիտեր փախտական գե-
րեաց համար սահմանուածը . ճակատ-
նին տաքցուցած երկաթով կը դրոշմեն ,
որպէս զի ալ մէյմ'ալ չկորսուին :

Երվինոս աղաղակ մը հանելով .

Ենհարին բան է , ըսաւ . ես ձեր տիկ-
նոջը հետ կը տեսնուիմ , ոտքը կ'իյնամ :

— Ի՞նչ որ զինքը նեղացնես , քեզի
ալ նոյն պատիժը կու տայ , վրայ բերաւ
ազատագիրը :

— Ինծի . պողաց տղան :

— Ե. թէ որ անով Երվինոսի
նախատինք մը ըլլայ , ինքը կը հասու-
ցանէ : Զէս մի գիտեր որ գերի ըսածդ
գին ունեցող անօթ մըն է միայն . թէ
որ զայն ճաթեցնէ կամ կոտրէ , տիրոջը
եղած ֆնասուն փոխարինելով ամէն բան
կը լմննայ կ'երթայ :

— Ի՞նչ զիս , թող . պողաց մայրը
սարսափած :

Իայց Երվինոս ամենեւին մօրը մօտիկ
չէր ընէր : Հասան վերջապէս տունը ,
բայց Սետեւա հոն չէր : Սերակա-
ցուն իմաց տրուեցաւ որ գայ ինչ ըլ-
լալն իմանայ . Երվինոս սկսաւ աղաչել ,
բայց կոպտաբար մերժուեցաւ :

— Ուրեմն մայրս խալսելու բնաւ
հնարք մը չկայ . հարցուց տղան յու-
սահատած :

— Գնէ՛ զինքը . պատասխանեց վե-
րակացուն հեգնօրէն :

— Գնե՛մ , կրկնեց Երվինոս . գերի
մը կրնայ ուրիշ գերի մը գնել :

— Զէս գիտեր ուրեմն ինչ բան է
փոխանորդ ըսածը :

Տղան ան ասէն միտքը բերաւ որ ի-

րաւցընէ իր ընկերներէն ոմանք իրենց հրամանին տակ գերիներ ունէին որոնց կը թողուին աւելի խիստ և ծանր աշխատութիւնները, բայց չէր գիտէր թէ ա՛նոնք իրենց ստակովը գնուած էին :

— Վայրս խալըսելու համար ի՞նչ պէտք է . հարցուց դողալով .

— Երեք հազար սեստեր :

Տղան յուսահատութեւն ձեռք ձեռքի վրայ բերաւ :

— Երկու հազար միայն ունիմ . ըսաւ միմնաւորով . . .

Բայց յանկարծ սրտին մէջ յոյս մը ծագեց . գիտէր որ իր ընկերներէն շատը ստակի գումար մը ունէին . և ապահով էր որ չէին ժխտէր իւրաքանչիւրը իրեն դրամ մը տալու, և այսպէսով կըրնար պակասը լեցնել : Վազեց վերակացուին որ կ'երթար, և աղաչաւոր ձայնով մը .

— Հիմա շուտով մը երեք հազար սեստեր առած կը դառնամ, ըսաւ . խօսք տուր միայն պատիժը 'ի կախ թողու :

— Ինչուան ժամը չորս քեզի ատեն կու տամ :

Երվինոս շնորհակալ եղաւ, և լալով մօրը հետ պագտուելով ելաւ գնաց :

Վազեց մէկէն ստակն առաւ ու նորէն համրեց : Ա՛յդ հազար սեստեր կը պակսէր պահանջուած ստակը լեցընելու համար : Վերեաց սենեակն իջաւ որ իրենցմէ օգնութիւն խնդրէ :

Բայց մէկն ալ չգտաւ : Տանը մէջ ամէն տեղ շփոթութիւն մը տիրէր էր : Երիտասարդ պատրիկը վաշխառուաց ձեռքն ինկած, որոնք իրեն վաշխով փոխ ստակ տալով իր կործանումը փութացուցէր էին, կը ձգէր կ'ելլար անէն, զոր արդարութեան մարդիկը գրաւեր էին : Վրան վրայ կախուած էին դատաւորին հրովարտակները, որոնք կը ծանուցանէին բոլոր իրեն ստացուածոց ծախուիլը : Եւրդիկն գլուխ կեցող Սատուրնոսի գանձին հոգաբարձուները եկեր էին, որոնց հետ էր նաև գանձապետը, որ ծախուած բաներուն ստակը պիտոր առնէր : Վերջապէս Երվինոսի

ստացուածոց հաշիւն ըրին լմնցուցին :

Եւս միջոցին Երվինոս ստակը ձեռքներս մտաւ : Պարտատէրներուն կողմանէ վաճառման գլուխ կեցողներէն մէկը տեսաւ ձեռքի ունեցածը :

— Ի՞նչ է այդ ձեռքինդ, հարցուց տղուն :

— Ընեցած ստակս է, պատասխանեց Երվինոս :

— Ըջափի կը հասնի :

— Երկու հազար սեստեր է :

— Երվինոսի տալու պարտքերուն կրնայ օգնութիւն մը ըլլալ, ըսաւ հռովմայեցին, ձեռքը երկնցնելով Երվինոսի իր խնայողութեամբը ժողված ստակներուն քսակին :

— Եւս ստակը իմն է, պողաց տղան, ուզելով դէմ դնել :

— Վու տիրոջդ է, պատասխանեց պարտատէրը . դու քեզի յատուկ բան մը չունիս, և ոչ իսկ կեանքդ քուկդ է : Տո՛ւր տա երկու հազար սեստերը, ապա թէ ոչ նայէ ծեծը կ'ուտես :

— Ըմենե՛քն, ամենե՛քն, պողաց Երվինոս քսակը ամուր մը կուրծքին վրայ բռնելով . այս ստակը ես ինքզինքս կերակուրէս և քունէ զրկելով ժողվե՛ր եմ, և ասով մայրս պիտոր գնեմ : Եւ որ այսօր իրեն տիրոջը երեք հազար սեստեր տանելու չըլլամ, մայրս փախըստական գերեաց պատիժը պիտի կրէ : Եւ, ո՛ր քաղաքացիք, մ'առնուք ինձմէ այս ստակը . թէ որ արդարութեան համար չէք թողուր, գոնեայ գըթութեան համար թողուցէք . . . Վուք ալ մայր ունիք . . . Եւ որ, ոտքերնիդ ինկած շնորհք կը խնդրեմ :

Երիտասարդ Ելտացին Սատուրնոսի գանձապետին և պարտատիրոջ ոտքն ինկաւ . բայց անիկայ ուսերը թօթվելով, աճուրդին վրայ կեցող պաշտօնականներուն նշան ըրաւ . անոնք ալ Երվինոսի քով մօտեցան և ուզեցին ձեռքէն երկու հազար սեստերը յափշտակել . տղան սպառնալիքով ու կատաղաբար պողալով սկզբան դէմ դրաւ . բայց այնչափ մարդկանց յաղթելու ոյժ չունենալով, ստակն առին ձեռքէն :

Սոք ելաւ փոշիի մէջ թաթխուած և կատաղութենէն խենթ դարձած, աչքերը չորս կողմը դարձուց զէնք մը ձեռք ձգելու համար։ Դժուրդին սպասաւորները խնտալով բռնեցին զինքը գաւթէն դուրս ձգեցին, դուռն ալ վրայէն գոցեցին։

Լրվինոս կատաղութեամբ երկու ձեռքերը գլխուն զարկաւ, ուզելով իր անկարողութիւնը պատժել։ Լսյ միջոցին մէկը թեթեւ կերպով մը ձեռքը ուսին վրայ դրաւ. ետին դարձաւ, և ահա՛ Կաբէլն էր։

— Ի՞նչ ունիս, որդեակ, հարցուց։

— Սոքս, պողաց Լրվինոս. բարկութենէն ու հեկեկալէն շունչը բռնուած չկրցաւ ուրիշ բան մը ըսել։

Հայր ջանաց քանի մը անուշ խօսքերով սիրան իջեցնել, և պատմել տուաւ գլխէն անցածը։

— Կաջալերուէ, ըսաւ տղուն. իմ գանձանակս ձեռքէս առնող չեղաւ. մէջը չորս հազար սեստեր կայ, զայն քեզի կու տամ։

Լրվինոս զարմացմամբ ետ ետ քաշուեցաւ, լածին չկարենալով հաւատալ։

— Եկուր, ըսաւ Կաբէլ. Սուբուրանեան ճամբուն վրայ մէկու մը քով աւանդ տուեր եմ ստակս. երթանք ու զէնք։

Երիտասարդ Կելտացին ուզեց չնորհակալութիւն մը թոթովել. բայց հայր պատուիրեց որ լուռ կենայ։

— Ի՞նչու մը եղած աղէկութիւնն, ըսաւ, շատ աւելի օգտակար կ'ըլլայ աղէկութիւնն ընողին քան թէ ընդունողին. որովհետեւ ընդունողը երկրաւոր ու անցաւոր բարիք մը միայն կը գտնէ. մինչդեռ միւսը յաւիտենական երջանկութեան հասնելու իրաւունք մը կը ստանայ. ուստի ինձի շնորհակալ մ'ըլլար ու ետեւէս եկուր։

Եւրան աւանդապահին տունը գացին, բայց ինքն հոն չէր, որով հարկադրուեցան երկայն բարակ սպասելու։ Լրվինոս սաստիկ տաքնապի մէջ էր, և աստիճանին չհասնելու վախէն կը գողգողար։

Սերջապէս Կաբէլի ստակը պահող հրէայն եկաւ. Երիտասարդ Կելտացին չորս հազար սեստերը առածին պէս, շիտակ դէպ 'ի Սետեւլայի տունը վազելով ճամբայ ելաւ։

Յուլեան տաճարին դիմացէն անցնելու ժամանակ գլուխը վեր վերցուց, և ջրեղէն ժամացոյցին վրայ տեսաւ որ ժամը չորսն էր. ան ատեն կարծես թէ պաղքատինք մը վրան եկաւ, բայց յուսահատաբար վազելով անցաւ հրապարակը և վերջապէս հասաւ Սետեւլայի դուռը։

Հազիւ թէ սեմին վրայ կոխեց, զարհուրեցի աղաղակ մը լսուեցաւ ներսէն. տղան դեգեկելով պատին կոթընեցաւ։

— Խիստ ուշ հասար, ըսաւ Սորգան, որ դրան քով կը սպասէր։

— Ուր է մայրս, ուր է, պողաց Լրվինոս։

Կելտացի ծերը առանց բան մը ըսելու, բռնեց ձեռքէն ու գաւթի թաւաւ։

Բազմութիւն գերիններու հոն կեցած ցած ձայնով մը կը խօսէին. մէջտեղը պատժող գերին սաստիկ վառած կրակարանի մը քով կեցեր էր, որուն ոտքին առջևը փռուած մնացեր էր Կորվա...։

Լրվինոս բազկատարած դէպ 'ի իրեն վազեց. բայց հազիւ թէ տեսաւ, զարհուրանաց աղաղակ մը փրցուց. աչքերուն վրայ ամպ մը պատեց, ծնկերն սկսան դողալ և նուաղած մօրը քով ինկաւ։

Երկու ժամ վերջը, Կորվա մահուան դուռը հասած, փսիւթի վրայ տարածուած պառկեր էր, որ իրեն անկողնի տեղ կը ծառայէր. ձեռքերը Լրվինոսի վրայ դրած, դեռ անոր անունը կը կրկնէր։ Սորգան գլխակոր և ձեռք ձեռքի վրայ դրած բարձին քով ոտքի վրայ կեցեր էր։

Խեղճ մայրը՝ իմանալով որ Լրվինոս քովն է, արցունքը կը բռնէր, և կը ջանար երբեմն երբեմն ժպտելու. բայց այն ժպիտն իսկ անոր սիրտը կը ճմլէր։ Ղակաթը կտաւէ լալով մը պատած։

էր, ուսկից թխագոյն արիւն մը կը վազէր. արտեւանունքը ցաւէն ուռած ըլլալով՝ չէր կրնար բանալ. և ցաւագին կերպով մը չչելով գունատեալ շրթունքներէն շունչը դուրս կ'ելէր:

Արվինոս յուսահատութեան խորը ընկղմած, մօրը ցաւերը չսաստկացնելու համար հեկեկանքը կը բռնէր. բայց այն քանի մը ժամուան մէջ անանկ երեսը կնճռեցաւ՝ որ կարծես թէ երկայն հիւանդութենէ մը ելեր էր: Այդ վայրէջանկոյն վրայ խոնարհած, զարհուրագին աչքով մը անոր իւրաքանչիւր շարժումները կը դիտէր, դեղնութիւնը կը զննէր, և մտիկ կ'ընէր անոր հեծկրտալով շունչ առնել տալը:

Յանկարծ՝ Այրվա ձեռքերն երկընցուց, և ջանաց դէպ 'ի վեր ելլել:

— Արվինոս, ըսաւ կէս ձայնով մը, ուր ես... Ձեռքերէդ ալ չեմ ճանչնար զքեզ: Ա՛հ, եկուր գրկէ զիս. մի թողուր զիս, սիրելիդ իմ Արվինոս... եղկելի որդեակ...

Վլուխը տղուն ուսին վրայ խոնարհեցուց. վայրկեան մը ահաւոր լռութիւն մը տիրեց... Արվինոս այլայլած չէր համարձակէր նայելու:

— Ս'այր իմ, ըսաւ վերջապէս հեղձամղձուկ ձայնով մը:

— Ս'անրուի քով գնաց մայրդ, միմեայ Ս'որգան:

Տղան ուժով մը՝ Այրվայի գլուխը վեր վերցուց, բայց անիկայ անզգայ և անշունչ նորէն վար ինկաւ... Արվինոս որբացաւ մօրմէն:

Էլեւորդ է հոս անոր յուսահատութիւնը նկարագրելը: Ազգեան նոյն իսկ Ս'որգան ալ սարսափեցաւ: Տղան առջի գիշերուրնէ 'ի վեր այնչափ կը քերէ տաքնապէր էր, որ բոլորովին ուժը կորսնցուցեր էր: Սաստիկ ջերմ մը վրան եկաւ. գլուխը սկսաւ դառնալ և քանի մը ժամ սաստիկ ցաւելէն ետքը, ինքզինքը կորսնցուց. բայց այս նուաղումը սիրտը քիչ մը հանգարտեցուց:

Ս'որգան, որ ոչ երբէք քովէն զատուեր էր, ատեն չկորսնցնելով սկսաւ զինքը քաջալերել:

Ս'այրդ սպաննեցին, ըսաւ ցած ձայնով մը. իրեն վրայ լալդ անօգուտ է. վրէժ առնելու նայինք:

— Արե՛ժ առնել, կրկնեց Արվինոս. ա՛հ, ինչ ընենք:

— Պէտք է ուժ առնես, որպէս զի ատենը հասածին պէս ետեւէս գաս:

Այրիտասարդ Ալետային ցատքելով մը ստք ելաւ, ու

— Արթանք, ըսաւ:

— Ղեռ պէտք է սպասել, կրկնեց ծերունին՝ բայց ամենեւին մի վախեր. հրչափ ալ ուշանայ, դարձեալ ահաւոր պիտի ըլլայ վրէժխնդրութիւնը:

Ան ատեն յայտնեց Արվինոսին գերեաց խորհուրդը: Հռովմայ մէջ անմիջապէս պիտի սկսէր ապստամբութիւնը: Արտումներին աս էր որ քաղաքը կրակի տան, ու հրդեհէն խալըսած ներն սպաննեն:

Տղան մոլեգին ուրախութեամբ մը կը լսէր այս բաներս, որով կը յուսար լիովին իր ոին յագեցընել: Ազգային գաղափարներով մեծցած, հաստատապէս կը հաւատար որ այս արիւնոռոգ զոհերով՝ Այրվայի ստուերը պիտի սփռուի. որով հռովմայեցի արիւն թափելով, մեռնողին վրայ ունեցած գորովը պիտի ցուցնէր. իր վրէժխնդրութեան մէջ ոչ թէ անձնական հաճոյք, այլ քաւութեան սրբազան պարտք մը միտքը դրած էր:

Այս կերպով մօրը ստուերը գոհ ընելու մտածութիւնը զինքը զօրացուց. և սրտին ցաւը զսպելով, անհամբերութեամբ նշանին կը սպասէր:

Արթապէս նշանը տրուեցաւ, և գերիները ձեռքերին ջահ՝ հրապարակը վազեցին. բայց հիւպատոսներն առաջուց իմացած ըլլալով, ամէն միջոյ 'ի գործ դրեր էին, որով ապստամբները մէկէն ամէն կողմանէ պաշարուեցան:

Սեծ մասը զէնքերին թողուցած ձգեցին փախան: Վերմանացոյցմէ ու Ալետացոյցմէ ոմանք, որոնց մէջն էին նաև Ս'որգան և Արվինոս, ուզեցին մինակ դէմ դնել. բայց դիմացի բազմութենէն ընկճուած, և կուրծքերնէն

վիրաւորուած, թշնամեաց դիակներուն մէջ ինկան :

Սորգանն ու Ղրվինոսը վերցուցին տարին այն արիւնշաղախ անկողնէն . և յուսալով որ իրենցմէ կարւոր բան մը իմանան, առանձին բանտերու մէջ դրին զիրենք և վերքերնին դարմանեցին :

Ինչպէս երկուքն ալ առողջացան, բայց ոչ հարցմունքներով և ոչ տանջանքով իրենց դաւակիցները մատնեցին : Վահիճներն յուսահատելով, երկուքն հասարակաց բանտը դրին, ուր գազաններուն համար որոշուած մահապարտները կը կենային :

Երբոր զիրար տեսան, ձեռք ձեռքի տունին առանց խօսելու, և իրարու քով նստան : Երկուքին ալ վերջին յոյսը պարապը ելլելով, յաղթուած 'ի մահ պիտի երթային . երկայն ատեն լուծիւն եղաւ :

— Սայրս առանց վրէժխնդրութեան պիտի մնայ, ըսաւ վերջապէս Ղրվինոս, տխուր կերպով մը :

— Սեր աստուածները չուզեցին, պատասխանեց Սորգան :

— Ի՞նչ տեսակ աստուածներ են քու աստուածներդ ալ, կրկնեց Ղրվինոս դառնութեամբ . ոչ կրնան զմեզ մեր տանը մէջ պահպանել, և ոչ գերութեան մէջ պաշտպանել . ինչո՞ւ զիրենք կը պաշտենք թէ որ անկարող են . իսկ եթէ կարող, ինչո՞ւ զմեզ կը թողուն : Հռովմայ աստուածները միայն ճշմարիտ են, որովհետեւ իրենք միայն ազատութիւնը անխախտ կը պահեն :

— Ի՞նչ ատեն անոնց աղօթեմք, ըսաւ Սորգան բարկութեամբ . ինչ, միթէ կը կարծես որ անոնք գերւոյ մը ձայնը կը լսեն . անոնք տէրանց միայն օգնութիւն կը խաւրեն . իսկ զմեզ Հռովմայեցոց ձեռքը մատնելով, մեզի թշնամի են և ոչ թէ աստուած :

— Ուրեմն, ըսաւ Ղրվինոս, ասկէ ետեւ բոլոր աշխարհք մէկ քաղքի մը գրաստի մը պէս սլիտի ծառայէ : Ի՞նչ, ինչո՞ւ ուրեմն կը ծնանինք . ինչո՞ւ նորածին տղան մէկէն չենք սպաններ՝ վրան

գլխով : Ինչպիսի չար ոգւոյ մը ստեղծուած է ուրեմն աշխարհքս, եթէ միշտ այսպէս անիրաւութիւնն ու գերութիւնը իրմէն պիտի չպակսի :

— Վիշատենէն խաղաղութիւնն ու ազատութիւնը պիտի տիրէ, ըսաւ մէկ քաղքը ձայն մը :

Ղրվինոս, ապա զլուխը բարձրացուց . և ահա՛ լյաբէլն էր :

— Ղուն հոս, պոռաց . . . դո՞ւ ալ ուրեմն բռնաւորաց դէմ ապստամբեցար . . .

— Ի՛յ, պատասխանեց Հայր, հապա միայն քիչ մը առաջ քու փափաքած աստուածդ պաշտելու համար գազաններուն կերակուր ըլլալու դատապարտուեցայ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Վրիստոնեայ եմ :

Ղրվինոս հետաքրքրութեամբ մը լյաբէլի երեսը նայեցաւ : Դատ անգամ այդ քրիստոնեայ անուանը վրայ նախատանք խօսուիլը լսեր էր, որուն համար չարագործաց ու ողորմելի մարդկանց կրօնքն է կ'ըսէին . հրէաստանէն եկած առասպել մը, որուն ետեւէն գացեր էր ռամիկը՝ որ ամենայն նորութեանց հաւատք կ'ընծայէ :

— Եթէ քու աստուածդ բարի է, ըսաւ Ղրվինոս, ուրեմն անկարող է որ զձեզ ձեր թշնամեացը ձեռքը կը թողու :

— Իմ աստուածս կը սիրէ զիս, պատասխանեց լյաբէլ, և կ'ուզէ ինձմով իր օրէնքը հաստատել : Լերաքանչիւր հաւատացեալ որ կը մեռնի, իր արեամբը այս նոր հաւատքը կը զարգացընէ : Տեսնելով այնչափ մարտիրոսաց, Քրիստոնէս, պոռալով մեռնելը, պէտք է հարցընես թէ ինչ կը նշանակէ այդ խօսքը՝ որ կը սորվեցնէ մարդկանց յօժարակամ մեռնիլ, իրենց դահճացը ներելով :

— Ի՞նչ ըսել է ուրեմն, հարցուց Ղրվինոս :

— Եւս ինքն թէ, հաւատամ 'ի մի ըստուած ճշմարիտ, յայն որ աշխարհք ստեղծեց մարդկանց համար, և

զմարդիկ՝ որպէս զի եղբօր պէս ապրին :
Բոլոր այն սուտ աստուածներն որ հի-
մա պաշտօն կ'ընդունին , քիչ ատենէն
պիտի կործանին . որովհետեւ անոնք
մարդկային ախտից նշանակ մըն են
միայն . Եստուած միայն պիտի մնայ որ
արեւու պէս զամէնքը կը լուսաւորէ :

— Ի՞նչ կը պատուիրէ իր օրէնքը ,
հարցուց Բրվինոս :

— Եղատութիւն և եղբայրակցու-
թիւն ՚ի մարդիկ . ամենուն երջանկու-
թիւն , և իւրաքանչիւրոց անձնասիրու-
թիւն : Իսկե՛ն դիմացը աւելի սուրբ են
տառապեալներն քան թէ այս աշխարհ-
քիս երջանիկները : Եթէրն համոզե-
լով և ոչ թէ ապստամբութեամբ կը
վերցնէ բռնութիւնն և շղթաները :
Պայ պիտի օր մը , և թերևս խիստ հե-
ռու չէ , որ ամէն տեղ մարդկանց հա-
ւատարութիւնը պիտի քարոզուի . որով
հետեւ քրիստոնէութիւնը պարզ հա-
ւատք մը չէ միայն , հապա օրէնք մարդ-
կութեան և ոգի ապագային . ասիկայ
նոր դար մը պիտի ըլլայ աշխարհիս հա-
մար :

— Ի՞նչ պիտի չտեսնէ՞ք զայն , ը-
սաւ Բրվինոս :

— Ի՞նչ հարկ է . պանդխտութեան
տեղ մըն է երկիրս , որ թէպէտ Վրիս-
տոսի օրէնքովը վերանորոգուի , բայց
նորէն ստուեր մըն է այն լաւագոյն աշ-
խարհքին՝ ուր ամէն մարդ ըստ իւրա-
քանչիւր գործոց պիտի վարձատրուի :

— Ո՛վ զմեզ հոն պիտի մտցնէ ,
հարցուց Բրվինոս :

— Եթէ , պատասխանեց Վաբէլ :
Բրվինոս վայրկեան մը լուռ կեցաւ ,
հայուն խօսքերէն սաստիկ զգածուած .
յանկարծահաս լուսոյ փայլակներ կը
տեսներ և հազար նորանոր երկնից ու-
րորտներ կը նշմարէր : Եսպիսի մեծ ,
գեղեցիկ և մխիթարական մտածութիւն
մը ոչ երբէք ունեցեր էր . այն արդա-
րութեան և սիրոյ վրայ հիմնած կրօն-
քը , Երգանի բարբարոս վարդապե-
տութեանց հետ կը բաղդատէր . և իր
աստուածոց անկարողութիւնը որ զին-
քը անմխիթար անդունդի մը մէջ ձգե-

էին , քրիստոնէից Եստուծոյն առաջա-
պարգև գթոյն հետ , որ փոխանակ թը-
շուառ կենաց՝ մահունէ ետեւ իրեն
այնպիսի յաւիտեան կեանք մը կը պատ-
րաստէր , ուր արդարութեան թագաւո-
րութիւնը կը սկսի :

— Եսպէս ուրեմն , ո՛վ Վաբէլ , ը-
սաւ վերջապէս երկար մտածելէն ետեւ ,
քու հաւատքդ երկրիս վրայ արդարու-
թեան և ճշմարտութեան օրէնք մը կը
հաստատէ , և ամէն մարդկային գործ
անկատար ըլլալով , ուրիշ կեանք մը կը
խոստանայ , ուր անիրաւութեանց հա-
տուցումն պիտի ըլլուի , յանցաւորները
պատժուին , և սգաւորները մխիթա-
րուին : Եթէ որ Վրիստոսի օրէնքը
մարդկանց մէջ անկատար կերպով հաս-
տատեց՝ ամենակատարեալ կերպով հոն
պիտի գտնուի . երկնից հութիւնն ու
բարութիւնը , երկրաւորիս պակասու-
թիւնը պիտի լեցնէ :

— Եթէ , ըսաւ հայր . և մենք որ
այս ճշմարտութիւնը ճանչցեր ենք ,
պէտք է զայն ամենուն դիմաց խոստո-
ւանինք , և կրկէսին մէջ գետին ին-
կած , այս աւետիքը մարդկային ազ-
գին քարոզենք :

— Վաբէլ , պոռաց Բրվինոս ոտք ել-
լելով , ես քրիստոնէայ կ'ուզեմ մեռնիլ :
Վանի մը օրէն բոլոր հասարակաց
չէնքերէն ծանուցումներ կ'ախուեցան ,
իմացնելով որ կայսրը հռովմայ ժողո-
վըրդեան տեսարան մը պիտի տայ : Բո-
լոր ժողովուրդը կրկէսը կը վազէր , և ան-
զգալի կերպով՝ մակընթացութեւ բար-
ձրացած ծովու մը պէս աստիճանները
կը լեցուէին : Եւ մը գերիններ , ձեռ-
քերնին մէյմէկ գործիք առած փոշելից
ասպարէզը կը հարթէին . մինչդեռ զա-
ղանամարտիկները , զլուինին բաց և
անթև պարեգօտ մը միայն հագած ,
նկուղներուն դիմացը ծանրաբայլ կը ձե-
մէին :

Եթէ հապարտներն եկան , որ երկու
հարիւրի չափ կային : Եւ զին կարգին
մէջն էին Վաբէլ և Բրվինոս . Եր-
գան ալ բարձրագլուխ և հանգարտ
նայուածքով ետեւէն կ'երթար :

կայսեր կայարանին դիմացէն անցնելու միջոց ամէնքն ալ ծուեցան, ծուներ կրկնելով ըստ սովորութեան .

« Եսմար, 'ի մահ գացողները կ'ողջունեն զքեզ » :

Երբոր կրկէսին մէջ տեղը հասան, կապերնէն արձրկեցին զիրենք . վերջը սպասաւորները գերիներուն ու գազամարտիկներուն հետ մէկտեղ ներս քաշուեցան :

Են ատեն խոր լռութիւն մը տիրեց . ամէնքը գլուխնին դուրս ձգած, և աչքերնին հրապարակին վրայ տնկած կը սպասէին : Եւս միջոցին՝ Եաբէլ Երվիկնոսի ձեռքէն բռնելով, բարձր ձայնով պողաց .

— Ո՛հ հռովմայեցիք, Վրիստոնէից Եստուածն է միայն ճմարիտ Եստուած . ես և այս տղան իր անունը խոստովանելով կը մեռնինք :

Հազիւ թէ խօսքը լնցուց, հազար մունչիւն միանգամայն լռուեցաւ . բոլոր նկուղներն բացուեցան ու գազանները կրկէսին մէջ յարձրկեցան :

Եատապարտելոյ մեծ մասը փախաւ . Երվիկնոս ու Եաբէլ ձեռքերնին երկինք վերուցած ծնկի վրայ եկան :

Են ատեն ահաւոր շփոթութիւն մըն է սկսաւ . բայց մէկէն փոշին բարձրանալով՝ ամպի մը պէս պատեց . աղօտ կերպով մը կը տեսնուէր միայն մարդկանց ասդին անդին փախչիլը . աղաղակ ու երկար մունչիւն մը կը լսուէր . կամաց կամաց ամէն բան դադրեցաւ, և երբոր փոշոյ ամպն ալ ցրուեցաւ, արիւնս . շաղախ արջերը, վագրերն ու առիւծները միայն տեսնուեցան, որոնք դիակնէրը կը կրծէին :

Աշխարհքիս գլխաւոր գետերուն ո՛ւր քափոռիլը ու երկայնութիւնն ինն :

Անոանք գետոյ Ատիոյ գէջ .	Բերանք գետոյ էն Բաֆի .	Երկայնութիւն քարսախ .
Եան-էքեանկ . . .	Երեւեան ծովը . . .	1,300
Ենիսէյ	Սառուցեշ Սվկիանոս բւեռային .	1,100
Հուան-Հօ	Եեղին ծովը	800
Եպի	Սառուցեալ Սվկիանոս	800
Եմուր կամ Սաղաւեան .	Զորայի անցքը	895
Ենդոս	Եսմէնի ծոցը	700
Երաւատի	Պէնկալայի ծոցը	700
Եանգէս	Պէնկալայի ծոցը	650
Պրահմաբուդրա	Եանգէս գետը	600
Եումնա	նոյն	300
Շիհուն	Երալ լիճը	350
Եփրատ	Պարսից ծոցը	420
Եոկրա	Եանգէս գետը	300
Եոտավերի	Հնդկաց ծովը	350
Եերպետա՛հ	Վամայայ ծոցը	300
Տիգրիս	Եփրատ գետը	400
Եւրոպիոյ գէջ .	»	»
Եանուբ	Սև ծովը	680
Տներեր	նոյն	450
Տնեսթեր	նոյն	200
Երուծ	Եանուբ գետը	200

Անուանի գէորդ Ատոյ գէ.	Բերանի գէորդ հը Լաթի .	Երէնուիւն գարախ .
Տօն	Բզախու ծովը	420
Տունա	Բիկայի ծոցը	150
Տուինա	Ճերմակ ծովը	180
Ուն	Սիջերկրականը	190
Լալր կամ Լալրոյ	նոյն	150
Ուէն	Հիւսիսային ծովը	330
Լալա	նոյն	270
Լլումէն	նոյն	120
Սիսթուլա	Պալգիկ ծովը	260
()տեր	նոյն	220
Կիէմէն	նոյն	160
Լուար	Պիսքայիոյ ծոցը	230
Կառոն	նոյն	130
Սորնէա	Պիթնեան ծոցը	140
Լօրան կամ Սէնթ	Լտլանդեան Ովկիանոս	300
Տուերոյ	նոյն	165
Սէն	Սանիքայ	170
Սոլկա	Կասպից ծովը	840
Սարտար	Լըշիպեղազոսը	110
Բօ	Լքրիական ծովը	170
Ատրիէի գէ.		
Կիլոս	Սիջերկրական ծովը	1,080
Կամպիա	Լտլանդեան Ովկիանոս	400
Սէնեկալ	նոյն	400
Կիկէր	նոյն	300
Ատրիէայի գէ.		
Լմազունեաց գետ	Լտլանդ . Ովկիանոս	1,400
Լարա	նոյն	680
Կուտիանա	նոյն	200
Կուտալքիվիր	նոյն	120
Լաթա	նոյն	70
()րէնոք	նոյն	600
Սիսուրի	Սիսիսիբի գետը	960
Լըքանսաս	նոյն	700
Կարմիր գետ	նոյն	550
()հիոյ	նոյն	400
Լլինուա	նոյն	200
Սիսիսիբի	Սիսիսիբի ծոցը	800
Սիօ տէլ Լորդ	նոյն	500
Պոլումպիա	Լազաղական Ովկիանոս	400
Պոլորատոյ	Պալիֆորնիոյ ծոցը	260
Սիւսգուէհաննա	Զէսըբիքի ծովածոցը	250
Լարանա	Սիոյ տը Լաթա	600